Արձանագրություն N 3

ՀՀ Ազգային ժողովի 2026 թվականի կարիքների համար սեղանի լրակազմով համակարգչի, դյուրակիր համակարգչի և անխափան սնուցման սարքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-26/15 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

04.06.2026թ.
ժամը՝ 12:00

ք. Երևան, Բաղրամյան 19

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Հարությունյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Հայրապետյան, Ս.Պետրոսյան, Տ.Ավետիսյան, Գ.Ավետիսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Թադևոսյան

1. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրեր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և հայտերի գնահատման մասին

Նիստը վերսկսվեց 04.06.2026թ. ժամը 12:00-ին: Հանձնաժողովն արձանագրեց, որ «Վահագն Մելիք-Մարտիրոսյան» ԱՁ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց՝ Ընթացակարգի 2-րդ, 3-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Վահագն Մելիք-Մարտիրոսյան» ԱՁ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների և մերժված հայտերի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրերի կնքման, Ընթացակարգի 1-ին չափաբաժինը չկայացած հայտարարելու վերաբերյալ

04.06.2026թ.-ին Հանձնաժողովը որոշեց՝

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Վահագն Մելիք-Մարտիրոսյան» ԱՁ-ին Ընթացակարգի 2-րդ, 3-րդ չափաբաժիններով հայտարարել ընտրված մասնակից, իսկ Ընթացակարգի մյուս մասնակիցների հայտերը մերժել:

2.2 Ընթացակարգի 1-ին չափաբաժնով հայտեր ներկայացրած մասնակիցների ներկայացրած գները աճուրդն ամփոփելու պահին գերազանցել են Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գնման գինը, ուստի նշված չափաբաժինների մասով ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են մերժված: Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

2.3 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

2.4 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.5 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վարդան Թորոսյան

անդամներ՝ _____ Աշոտ Հայրապետյան

_____ Սասունիկ Պետրոսյան

_____ Տավրոս Ավետիսյան

_____ Գրիգոր Ավետիսյան

քարտուղար՝ _____ Հեղինե Թադևոսյան